ջինն, և վկայէ ինձ հրամանն և բանն Աստուծոյ առ սուրբ մարգարէսն, առաքեալ 'ի ձեռն հրեշտակի վասն հնազանդութեան օրինաց և կատարման պարտուց, ես և հաւատարիմ մնալոյ 'ի վերայ աստուածային ուխտիս :

„ Վասնզի քրիստոնեայք ընդ իշխանութեամբ իմով ժողովուրդ իմ են, և ես իշխան եմ 'ի վերայ նոցա, ուրեմն հարկ է ինձ այց առնել նոցա, և պահել զնոսա յամենայն չարեաց և 'ի վշտաց, և վարձ բարի մնասցեն ինձ և ազգին իմոյ որք սփռեալ կան ընդ ոլորտս տիեզերաց :

„ Այլ զոր ինչ հարկ սահմանեալ է իմ տալ իշխանացն՝ աւելի քան զայն մի առնուցուն, և մի ոք վշտացուսցէ և նեղեսցէ զնոսա. մի ոք փոխեսցէ զաշխարհս նոցա, ոչ զկրօնաւորն 'ի կրօնաւորութենէ, ոչ զքրիստոնեայն 'ի քրիստոնէութենէ, ոչ զմիայնակեացն 'ի միայնակեցութենէ և 'ի մենաստանաց իւրեանց. մի արգելցեն զքարոզիչս և զքարոզութիւնս նոցա, և մի աւերեսցեն զբնակարանս և զգաւառս նոցա, և մի մերժեսցին ընչից նոցա 'ի ժամ կառուցման եկեղեցեաց, մի իշխեսցեն բառնալ զզանգակս յեկեղեցեաց նոցա : Այժմէն հաստատեցի զբարեկարգութիւնս մնալ վասն նոցա : Իսկ որք աւերեսցեն զուխտն իմ և նենգեսցեն՝ անցանելով զպատուիրանաւ իմով, այնպիսիքն կործանեն զուխտն աստուածային և արժանի լինին մշտնջենաւոր պատժոց :

„ Թագաւոր կամ այլ ոք յազգէն մուսլիմանաց կամ բարեկրօնից՝ բռնութբ զքրիստոնեայս մի դարձուսցեն 'ի կրօնս մուսլիմանաց և մի վիճեսցեն ընդ նոսա 'ի վերայ իրացն հաւատոյ, եթէ ոչ քաղցրութեամբ և հանդարտութեամբ պահեսցեն զնոսա ընդ հովանեաւ ողորմածութեան իւրեանց, փրկելով զնոսա յամենայն տառապանաց և 'ի վշտաց, ուր ուրեք երևեսցին և բնակեսցին նոքա : Այլ եթէ ազգն նոցա հպատակեալ՝ կարօտասցի ընչից վասն շինութեան եկեղեցեաց, մենաստանաց, քաղաքական խորհրդոց, վասն գաւառաց և տանց իւրեանց, մուսլիմանք պարտին օգնել նոցա և այց առնել, տալով նոցա մասն ինչ յանժառանգ ընչից. և այն ես ոչ ըստ կերպի պարտուց, այլ ըստ կերպի ողորմութեան, և տացեն նոցա խորհուրդ բարի 'ի գործառնութիւնս նոցա, զի այն է հաճոյ առաջի Աստուծոյ և առաջի մարգարէի նորին : Իսկ եթէ ոք նենգեսցէ և այլայլեսցէ զայս ուխտ իմ, այնպիսին անհաւատ է և ապստամբ լինի յաստուածային մարգարէէն և զրկեսցի յարդեանց նորա, և մարգարէն ընդ նա ոչ հաճեսցի. զի որք ոչ իցեն հաւատարիմք և հնազանդք ուխտիս զոր հաստատեալ է՝ այնպիսիքն զխմրդ լինին հնազանդք սրբոյն սրբոց որդւոյն Աբիթալէպայ փառաւորելոյն. քանզի զոր ինչ նա կարգաւորեալ է՝ պարտականութիւն մուսլիմանաց է կատարել, այց առնելով նոցա և ողորմել նոցա յամենայն ժամանակ՝ որքան տևեսցէ աշխարհ մինչև 'ի կատարած աշխարհի : Այս փառք արարողին տիեզերաց „ :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սարտէնիայի Թագաւորական ցեղը :

ԿԱՐՈԼՈՍ Ալբերտ թագաւորը ծնած է 1798ին, հոկտ. 2ին. — թագաւորեց 1831ին, ապրիլ 27ին:

Մարիամ Թերեզա թագուհին ծնած է 1801ին, մարտի 21ին :

Վիկտոր Մանուէլ անդրանիկ որդին և թագաւորութեան ժառանգը, որ և կ'ըսուի Դուքս Սաբուդիոյ կամ Սավօյայ, ծնած է 1820ին, մարտի 4ին, և հինգ զաւակ ունի :

Փերտինանտ Ալբերտ երկրորդ որդին ծնած է 1822ին, նոյեմբ. 15ին. կ'ըսուի Դուքս Գենուայի կամ Ճենովայի, և մօտերս ընտրուեցաւ թագաւոր Սիկիլիոյ :

Թագաւորին քոյրը Աւստրիոյ կայսեր հօր եղբօրը Ռէնիէրի արշիդքսին կինն է :

Եղբայրը Եւգինէոս ծնած է 1816ին, ապր. 14ին, կ'ըսուի Իշխան Սավօյայ Քարինեան, և հիմակուան պատերազմին ատենը թագաւորին տեղակալն է : — Ասոր քոյրը Նափոլիի թագաւորին Լէոփոլտ եղբօրը կինն է :